ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան 23.10.2025թ.
Ժամը 12:00

Գնահատող հանձնաժողովի նիստին մասնակցում էին

Մ. Քիրամիջյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիթորինգի բաժնի պետի պարտականությունները կատարող
Ռ.Շահազիզյան	-հանձնաժողովի անդամ	«Հայաստանի՝ հարմարվողականության ֆինանսավորման ազգային մեխանիզմ» դրամաշնորհային ծրագրի համակարգող
Ա.Բարսեղյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ դոնորների հետ համագործակցության բաժն առաջին կարգի մասնագետի ժ/պ
Լ.Սարգսյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիթորինգի բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատար
Լ.Հակոբյան	-հանձնաժողովի անդամ	ԲԾԻԳ ՊՀ-ի ծրագրերի իրականացման և մոնիթորինգի բաժնի առաջատար մասնագետ

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2025 թվականի հոկտեմբերի 22-ին ժամը 12:00 www.armeps.am համակարգի միջոցով:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Տեղեկություն ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

2025թ-ի հոկտեմբերի 22-ին «Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գրասենյակում, որը գտնվում է ք. Երևան, Տիգրան Մեծ 65Ա հասցեում, տեղի ունեցավ ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով («Հայաստանի պատրաստվածության հրատապ կարիքների հասցեագրում՝ ԿԿՀ-ի համալրման 2-րդ շրջափուլում կլիմայական հետևողական գործողությունների իրականացման համար» պատրաստվածության աջակցության ծրագրի շրջանակներում Ծրագրային հայեցակարգի լրամշակման խորհրդատվական ծառայություններ ձեռքբերում) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է 5 անդամից, և հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի 4 անդամները, հետևաբար՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Մ.Քիրամիջյանը, իսկ քարտուղարն էր՝ Ա.Հակոբյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտի գնահատման մասին
2. Նախաորակավորման ցուցակում ներառելու մասին

1. ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Մ.Քիրամիջյանը նիստը հայտարարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված, տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկան

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.gnumner.am կայքի armeps համակարգի միջոցով հրավերի սահմանված օրը և ժամին՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ին ժամը 12:00: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Հայտերի վերաբերյալ պարզաբանում տեղի չի ունեցել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ՀՀ-ԲԾ-Ա-ԲՄԾՁԲ-25/123 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը այսուհետ՝ նաև մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	էլ. հասցեներ	Հեռախոսահամար
1	Ավենյու Քընսալթինգ Գրուպ ՍՊԸ	info@avenueconsulting.am	099751100

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) «Մասնագիտական փորձառություն»

2) «Աշխատանքային ռեսուրսներ»

1) «Մասնագիտական փորձառություն»

ա. «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը ըստ ոլորտների՝

Փորձառությանը ներկայացվող պայմանները	**Փորձառությունն ապացուցող փաստաթղթեր**

Կանաչ կլիմայի հիմնադրամի ֆինանսավորմանը ներկայացված պարզեցված ձևաչափի (SAP) ծրագրային հայեցակարգերի և/կամ առաջարկների մշակման փորձառություն:	Մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող 5 տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի ԿԿՀ ֆինանսավորմանը ներկայացված ծրագրային հայեցակարգերի և/կամ առաջարկների առնվազն 25 հազար ԱՄՆ դոլարին համարժեք արժողությամբ ծառայության մատուցման առնվազն մեկ պայմանագիր: Ընդ որում՝ ծրագրային հայեցակարգի մշակման պայմանագրի դեպքում վերջինիս կից պետք է ներկայացվի ծրագրային հայեցակարգի՝ ԿԿՀ-ի կողմից հաստատումը հավաստող փաստաթուղթ:

- Որպես մասնագիտական փորձառության ապացույց Ավենյու Քընսալթինգ Գրուպ ՍՊԸ-ը ներկայացրել էր նախաորակավորման փուլի հրավերի պահանջով լրացրած Հավելված 1 և Հավելված 2-ը: Սակայն չէր ներկայացրել նախկինում կատարած պայմանագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրերի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը և պայմանագրի ներքո մշակված հայեցակարգի՝ ԿԿՀ-ի կողմից հաստատումը հավաստող փաստաթուղթը:
- Ավենյու Քընսալթինգ Գրուպ ՍՊԸ-ը չէր ներկայացրել աշխատակազմի մասնագետների ցանկ, ինչպես նաև չէր ներկայացրել աշխատակազմի ինքնակենսագրականները:

Նիստը կասեցվեց մեկ աշխատանքային օրով: Մասնակցին ծանուցվեց հայտը շտկման անհրաժեշտության մասին: Մեկ օրվա ընթացքում Ավենյու Քընսալթինգ Գրուպ ՍՊԸ-ը ներկայացրեց պայմանագրերի պատճենները, պայմանագրերի մասին փաստաթղթերը և աշխատակազմի մասնագետների ինքնակենսագրականները և մնացած անհրաժեշտ փաստաթղթերը:

Ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ

1/ ներկայացրած պայմանագրերից միայն մեկն է հանդիսանում **Կանաչ կլիմայի հիմնադրամի ֆինանսավորմանը ներկայացված պարզեցված ձևաչափի (SAP) ծրագրային հայեցակարգերի և/կամ առաջարկների մշակման փորձառություն** ապացուցող պայմանագիր, սակայն այդ պայմանագրի փաստաթղթերում բացակայում է ԿԿՀ-ի կողմից հաստատումը հավաստող փաստաթուղթը: **Հետևաբար այդ կետով հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին:**

2/ Հրավերով պահանջվող որպես Կլիմայի հարմարվողականության և մեղմման միջազգային խորհրդատու առաջարկվել է Էնդրյու Էդին, որի ինքնակենսագրականում ներկայացված տեղեկության հիման **գնահատող հանձնաժողովը արձանագրեց հրավերի պահանջների անհամապատասխանություն:**

Ամփոփելով վերոգրյալը 1-ին չափաբաժնի մասով Ավենյու Քընսալթինգ Գրուպ ՍՊԸ-ը չի ներառվում նախաորակավորված մասնակիցների ցուցակում:

Նախաորակավորման փուլը հայտարարագրվում է չկայացած: Հայտարարվում է անգործության ժամկետ 10 օրացուցային օր: Անգործության ժամկետը սահմանվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Քիրամիջյան

Հանձնաժողովի անդամներ՝
Ռ.Շահազիզյան

Լ.Սարգսյան

Ա.Բարսեղյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Ա. Հակոբյան